

կտն գաղափարը, ասն է արեւստի նշանակութիւնը:

Եթէ մի գիրք նշանակած է ժողովրդական ընթերցանութեան համար, բաւական չէ, որ նորա բովանդակութիւնը լինի պարզ և հասկանալի, պարունակէ իւր մէջ մի բարձր գաղափար, ալ նաև կարևոր է, որ չի նի մաքուր և պարզ լեզուով գրւած:

Ահաւասիկ ալս երկու թարգմանութիւններն էլ համապատասխանում են երկրորդ պահանջին: Մենք

ուրախութեամբ պէտք է շնչտենք, որ լեզուն բաւականին մշակւած, սահուն, պարզ է՝ հակառակ շատերի թարգմանութիւնների: Մեզ համար շատ ուրախալի է և ասն հանգամանքը, որ ալս թարգմանութիւններն արեւ նն հալ օրիորդներ: Յանկալի կը լինէր, որ իգական սեռը աւելի եռանդով մասնակցէր մեր աղքատ գրականութեանը:

Իար.

ՍՊԻՐԻ, ԵՍՂԱՆՆԱ.—«ՎԱՐԴ-ՐԵՍԻՒՆ»: Թարգմանութիւն գերմաներէնից Ի. Յ. Հրատարակութիւն ԹԻՖ. Ընկ. Հայերէն գրքերի հրատարակութեան, № 29, Թիֆլիս, 1891 թ. 42 էրես. գինն է 10 կ.:

Եօհաննա Սպիրիի ալս փոքրիկ պատմութեան գլխաւոր հերոսունին է մի փոքրիկ աղջիկ, որին ամբողջ գիւղն անւանում էր Վարդ Բեսլի, որովհետեւ նա շատ սիրում էր վարդը: Այդ աղջիկն որը լինելով, գտնւում էր իւր մօրեղբոր մօտ. սակայն ալդ վերջինը միծ ուշադրութիւն չէր դարձնում փոքրիկի կրթութեան վերալ, ըստ որում նա իւր կնոջ մահից լետով թէ րարուպէս և թէ նիւթապէս քալքաւած էր. առաջին՝ նա իրան նւիրել էր հարբեցողութեան, գիշեր-ցերեկ պանդոկից տուն չէր գալիս. երկրորդ՝ նորա ձեռքից պարտատէրերը պէտք է շուտով խլէին տուն և տեղ: Փոքրիկ Բեսլին չաքաթներով իւր մօրեղբոր երեսը չէր տեսնում և երբ ուսումնարանից տուն էր վերադառնում, իսկոյն շտապում էր

իւր սիրած վարդերի լետից. նա իւրաքանչիւր պարտիդի մօտով անցնելիս, խնդրում էր. «պարտիդպանից վարդ ու ալդ վերջիններն էլ համակրելով ալդ խեղճին՝ նւիրում էին մէկի տեղ տասնեակներ: Այդ վարդերն եղան վերջը որբի ապրուստի գլխաւոր միջոցը, ըստ որում նա իւր մօրեղբոր տանը ոչ մի ժամանակ հաց չէր գտնում: Ահաւասիկ մէկ օր վարդի փունջը ձեռքին բռնած անցնում էր նա մի տան մօտով, կանչում է նորան մի պառաւ կին իւր մօտ և առաջարկում է, որ նա միշտ իւր հագմար վարդ բերէ և մի կտոր հացի հետ փոխէ. փոքրիկ Բեսլին էլ անում է, նա ալդ կտոր հացով պահում էր թէ իրան և թէ հոգսերի մէջ թաղւած մի կնոջ, որին գիւղը կանչում էր հոգսամալլ: Վերջապէս մի օր հոգ-

սամալրի կորած որդին կրկին չալտնուում է և իւր մօրն ու Բեսլին իւր մօտն է պահում:

Վերոյիշեալ պատմութեան բովանդակութիւնն առնւած է դերմանական կեանքից. գործող անձերը ներկայացնում են մեզ ալնպիսի տիպեր, որոնց նմանը հազարներով կայեր, որոնք դերմանական շրջաններում Միայն հերոսունհին, ալն է Վարդ Բեսլին բաւականին չափազանցած է: Նա չունենալով հենց կեանքի առաջին օրերից կրթողներ և ապրելով կեանքի մթնոլորտի մէջ, կարողացել է ազնւանալ, վսեմանալ և ալնպիսի գաղափարներ պաշտել, որը նա միայն լաւ կրթութեան միջոցով կարող էր ձեռք բերել: Այս դէպքում մենք պէտք է մի ալ համաձայնեմք աչքի առաջ ունենանք, ալն է որ հեղինակունու նպատակը չէ եղել տալ մի հաւատարիմ պատկեր դերմանական կեանքից, ալ նա աշխատել է ստեղծել մի պատմութիւն մանուկների համար: Մի մանկական պատմութեան գլխաւոր պատմաներն երկու են. կամ նիւթը պէտք է վերցրւած լինի ուղղակի կեանքից, որը չի պարունակում իւր մէջ անբարոյական տարրեր, կամ ալ դիւթը պէտք է դրած լինի կեանքի հողի վերալ և պարունակէ իւր մէջ մի որ և է բարոյական իմաստ, որն և պէտք է արտալալուած լինի պարզ, հասկանալի, որպէս զի ալ իմաստը կարողանալ հնչողութեամբ թափանցել մանկական քնքույ սիրտը: Ահաւասիկ ալս վերջին տեսակէտից նախած, Սպիրիի պատմութեան հերոսուն հու չափազանցութիւնը ներելի է:

Նրկու երեխաներ հաւասարալափ կրթութեամբ չեն կարող իրար վերալ մեծ կրթիչ ազդեցութիւն ունենալ, ալ անպատճառ պէտք է. որ մէկը միւսից քիչ թէ շատ բարձր լինի: Հեղինակունին Վարդ Բեսլին բոլոր ժամանակակից երեխաների իդէալ է դուրս բերում, որ նա կարողանալ ազդեցութիւն ունենալ մանկական հողու վերալ: Պատմութեան գլխաւոր կրթիչ մտքերն հետեւալն են՝

Իւրաքանչիւր երեխալ կարող է որբ դառնալ, պէտք է լինել համեստ և աստուածասէր: Աստուած որբին, ինչպէս տեսնում ենք Բեսլին, անխնամ չի թողնում: Պէտք է խեղճ ու աղքատ մարդուն սիրել և օգնել, ինչպէս Բեսլին էր անում: Այս գաղափարներն պէտք է հենց երեխական հասկում անհատի հողու մէջ արմատ ձգեն, եթէ նոքա քանի որ երիտասարդութեան հասակում կերպարանափոխւելու են սկզբունքների. շատ վերաւացի է նկատում Հերբարտը, ալն տարրն է մարդու հողու մէջ ամենատուգեղն, ինչ որ նորա երեխական հասակումն է արմատ ձգել: Վարդ Բեսլին մի կատարեալ մանկական պատմութիւն է և ցանկալի կը լինէր, որ ալ գրքով կը իւրաքանչիւր մանկական գրադարանում գտնւէր:

Ինչ թարգմանութեան և լեզուին է վերաբերում, պէտք է խոստովանւենք, որ թարգմանութիւնը լաջող է և լեզուն շատ պարզ, սահուն և կոկ: Թարգմանիչը մոռացել է միայն լիւր վերնագրում, որ ալս գրքով կը մանկական է, հեղինակի կողմից ալ դեռ հասկանալի է. որովհետեւ գեր-

մանական աշխարհում չափերի է, որ մանկական հեղինակ է.

Եօհաննա Սպիրին գլխաւորապէս

Բար.

Տէր-Գրիգորեանց, Գրիգոր, բժշկապետ (Թիֆլիսեցի)։— ՀԱՆՐԱՄԱՏ-
ՁԵԼԻ ԲԺՇԿԱՐԱՆ։ Առողջապահութեան և բժշկականութեան հան-
րամատչելի գրույցներ։ Հասոր առաջին, տետրակ առաջին։ Թիֆլիս,
ապ. Տ. Նազարեանցի 1891 թ.։ Մեծադիր, 106 էրես, տառ № 10,
գինն է 70 կոպէկ։

Թերևս երկար թէր սպասելը, մինչև որ ներկալ գրքի մասին գրէր մանրամասն քննադատութիւն մա-
նագիտական տեսակէտից. մինչդեռ
պ. Տէր-Գրիգորեանցի այս հրատա-
րակութիւնը ամենալն իրաւունքով
կարող է պահանջել հասարակութեան
և մամուլի ուշադրութիւնը իւր վերալ
հէնց իւր երևան գալուն պէս։ Պէ
Տէր-Գրիգորեանցի «Հանրամատչելի
բժշկարան» մի սովորական գրքի
հրատարակութիւն չէ, ալ մի ամ-
բողջ ձեռնարկութիւն է ու մի երևութ
մեր աղքատիկ գրականութեան մէջ.
Դատեցէք միայն սորանով, որ ներ-
կալ գիրքը սկիզբն է հրատարակու-
թիւնների մի ամբողջ շարքի, որոնք
միասին պէտք է կազմեն մեծադիր
և մանրատառ տպած 720 էրեսներ։

Աշխատասիրողը հետևեալ կերպ
է որոշում իւր հրատարակութեան
նպատակը և բնաւորութիւնը՝ «Հան-
րամատչելի բժշկարան առելով, մենք
հասկանում ենք ոչ թէ հիւանդու-
թիւնների բժշկելու մի սողովածու,
որ իւրաքանչիւր հիւանդութիւն
բժշկելու համար առաջարկում է այս
կամ այն խորհուրդը, այս կամ այն

ղեղերը. այդ անունով ընդունում
ենք (?) մի հանրամատչելի ձեռնարկ,
որ ծանօթացնում է ընթերցողին
բժշկականութեան և առողջապահու-
թեան արմեան ուղղութեան հետ,
պարզում, բացատրում է հիւանդու-
թիւնների ծագման և տարածման
պատճառները և հիւանդութիւնների
առաջն առնելու համար նպատակա-
չարմար միջոցներ է առաջարկում,
սովորեցնում է ընթերցողին՝
իւրաքանչիւր հիւան-
դութեանը գիտակցաբար վե-
րաբերել (երես 9—10)։

Գիրքը, որպէս ասած է երես
9, «ամփոփելով իւր մէջ բժշկա-
կան և առողջապահական գիտու-
թիւնների սկզբունքները՝ կարող է
ուղեցուց լինել իւրաքանչիւր զար-
գացած մարդուն՝ գիտակցաբար
ըմբռնելու առողջապահական և բժշ-
կական հարցերը»։

Գրքից վերցրած այս քաղաճը-
ներով միանգամայն որոշում է այս
հրատարակութեան բնաւորութիւնը և
նպատակը. ներկալ առաջին տետ-
րակի ընթերցումը մեղ համոզում է
որ աշխատասիրողը բարեխղճաբար